5.11.2021
348-20

ՀՀ Վարչապետի աշխատակազմի ղեկավար
պարոն Արայիկ Հարությունյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

2021 թվականի սեպտեմբերի 10-ին, ի պատասխան ԻԱԿ-ի 2021 թ. օգոստոսի 12-ի թիվ 347-91 գրության, Վարչապետի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը ուղարկել էր պատասխան գրություն, որում նշված էր, որ **Կառավարությունը հապատասխան գերատեսչությունների միջոցով հետամուտ կլինի խնդրի համալիր լուծմանը** (պատասխան գրությունը՝ կից)։

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի, Սիլիկյան թաղամաս հին խճուղի 60/1 հասցեի անմիջական հարևանությամբ **համայնքային սեփականություն հանդիսացող և բնակելի նշանակություն ունեցող հողատարածքի վրա գործող քարի արտադրամասի գործունեությունը կասեցնելուն ուղղված ի՞նչ միջոցառումներ է իրականացրել ՀՀ կառավարությունը։** (Ըստ Կադաստրի պետական կոմիտեի տրամադրած տվյալների՝ այդ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ բնակելի կառուցապատում)։
2. Համայնքի ղեկավարը **հանցավոր անգործություն է դրսևորել** և տասը տարուց ավել համայնքային հողի ապօրինի շահագործման փաստի առիթով անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկել՝ կոպտորեն խախտելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ և 9-րդ ենթակետի պահանջները։ Ուստի, **ի՞նչ իրավական հետևանքներ են առաջ եկել Աջափնյակ համայնքի ղեկավարի համար ՀՀ Կառավարության կողմից ձեռնարկած միջոցառումների արդյունքում։**
3. **Վերադարձվե՞լ է արդյոք 10 տարի ապօրինի շահագործվող համայնքային հողը Աջափնյակ համայնքին։**

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան